ՔԱՂՎԱԾՔ
ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
10.05.2022թ.կայացած նիստի
թիվ 9 արձանագրություն

Օրակարգ

1. ԵԼՀ ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը

2. Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին: Նիստին ներկա էին խորհրդի 36 անդամներից 25-ը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մեթոդական խորհրդի բոլոր անդամները /մասնավորապես ամբիոնի վարիչները/ խնդրեցին վերանայել այն պահանջը, որ յուրաքանչյուր կրթական ծրագիր՝ թե՝ բակալավրի և թե՝ մագիստրոսի պետք է ունենա մեկ ղեկավար: ԵԼՀ ամբիոնների վարիչներ Ս.Գասպարյանը, Գ.Սավոյանը, Գ. Սարքսյանը, Հ. Բաղդասարյանը նշեցին, որ «Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն», «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն», «Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն», «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն», մասնագիտությունների կրթական ծրագրերի ղեկավարման համար կարևոր են համարում ունենալ երկու ղեկավար՝ յուրաքանչյուր լեզվից մեկ մասնագետ: Հետևաբար, խնդրանք ձևավորվեց՝ամբիոններին տալ նման հնարավորություն:

ՈՐՈՇԵՑԻՆ — ԵԼՀ ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարների հարցի լուծման համար դիմել ուսումնական-ակադեմյական գծով պրոռեկտոր՝ Է.Ասրյանին:

ԵԼՀ ֆակուլտետի
դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝ Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Դալալյան
10.05.2022թ.